



ԿԱՊԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՍԱՐԿԱԿԱՆ /ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆ/

PUBLIC ENVIRONMENTAL INFORMATION CENTRE OF KAPAN

КАПАНСКИЙ ОБЩЕСТВЕННЫЙ ЦЕНТР ЭКОЛОГИЧЕСКОЙ ИНФОРМАЦИИ

ՀՀ Մյուսիքի մարզի Կապան, Գ.Նժդեհի հեռ.09379-59-21

e-mail info_kapan@aarhus.am, kapan.aarhus@mail.ru

Կ N-01/15

<04_>_մարտ_2015

Կապանի քաղաքապետ


Պարոն Աշոտ Հայրապետյանին

Հարգելի պարոն Հայրապետյան

Կապանի Օրհուս կենտրոնում շրջակա միջավայրի պահպանությանը առնչվող քննարկումներում բազմից հնչեցվել է, որ Կապանի Դավիթ Բեկ թաղամասի բնակելի շենքերի անմիջական հարևանությամբ գտնվում է լքված հանքուղի, որի մուտքի դարպասը չկա և վտանգ է հանդիսանում երեխաների համար: Մուտքի դիմաց կա հանքաջրերի հեռացման դիտահոր, որը ցավոք կիսաքանդ վիճակում է և անձրոտ օրերին հանքուղուց դուրս եկող ծանր մետաղներով աղտոտված դեղնավուն ջրերը/մոնոթորինգի հաշվետվություն/ լցվում է քաղաքի փողոցները, աղտոտելով այն: Չորանալուց հետո մեքենաների հոսքից և քամիներից այդ դեղին փոշին բարձրանում է և աղտոտում քաղաքի կենտրոնի մթնոլորտային օդը:

Խնդրում ենք Ձեզ միջոցներ ձեռնարկել դարպաս տեղադրելու և նորոգելու հանքաջրերի հեռացման դիտահորը:/կից ներկայացվում է լուսանկարները և հանքուղու ջրի բաղադրությունը/:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքներով՝  Աշոտ Ավագյան

Կապանի Օրհուս կենտրոնի համակարգող

